

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԱՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախսը խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նամակ կամ ալ գրութիւն եւ չի տրուիր:

ՈՐԵՐՈՒՆ ԽՆԴԻՐԸ

—Ի՞նչ եղաւ որբերուն խնդիրը, կը հարցունեն մեզ զանազան կողմերէ:

Պէտք է խոստովանիլ թէ այս զուտ մարդասիրական գործն ալ, որուն շուրջը ո՛չ վէճ պէտք էր յարուցուիլ և ո՛չ դժուարութիւն, խնդիր մը դարձաւ արդարեւ, նախ՝ Աղեքսանդրիոյ ազգայիններուն ձեռնպահութեան պատճառաւ և երկրորդ՝ Պատրիարքարանի կողմէ եղած առարկութեան մը վրայ: Երկրորդը սակայն չա՛տ աւելի կարեւորութեան արժանի է քան առաջինը. ուշ կամ կանուխ, Աղեքսանդրիոյ մէջ կրնայ շարունակուիլ հանգանակութիւնը որ այնքան եռանդով սկսաւ ի Գահիրէ. քիչ մը աճապարեւ եինք, — վրաստահութեան արժանի ազգ. պաշտօնական աղբիւրի մը յենլով, — երբ ծանուցինք թէ յանձնաժողով մըն ալ հոն կազմուեր է. լուրը կանխահաւ էր, բայց ո՛չ սխալ. այդ մարմին՝ գեռ չի կազմուած լուծուեցաւ, իրաւասութեան բժախնդրութիւններով. մաղթենք որ նորը աւելի երկարակեաց ըլլայ, եթէ երբեք նոր մը պիտի կազմուի:

Այսօր, պիտի խօսինք միայն երկրորդ խնդրին վրայ:

Չենք գիտեր ի՞նչ նկատումով, Պատրիարքարանը փափագ յայտնած է որ Եգիպտահայոց պաշտպանութեան տակ առնուելիք որբերը խնամուին ու դաստիարակուին իրենց բնագաւառին մէջ, ուսկից դուրսելելու մասին դժուարութիւն իսկ ցոյց կը տրուի: Ինչո՞ք կա՞յ այդպիսի դժուարութիւն մը. գէթ Պոլսոյ օրաթերթի մը գրածներուն նայելով, որ սովորաբար անտեղեակ չէ Պատրիարքարանի շուրջն անցած գարձաններուն, հակառակը կիմանանք, երբ յայտարարելէ ետք թէ «փոխադրման պաշտօնական արգելքները վերացած են», կաւեցունէ:

Տեղոյ վրայ որքեռուն խնամածութեան գաղափարին մեծապէս մղուել կը տրուի (Պատրիարքարանի կողմէ), զի ասով Պոլիս կազմակերպութեան պատասխանատուներէն, եւ միայն տարեկան նպաստ մը ապահովելու հարկին ներքեւ կը մնայ:

Եթէ այս է Պատրիարքարանի առարկութեան կամ առաջարկած բարեփոխման շարժառիթը, կրնար վստահ ըլլալ թէ Եգիպտոսի Յանձնաժողովը սիրով կը ստանձնէ այդ

կազմակերպութեան «պատասխանատուութիւնը» որ կարծես «ծախք և յոգնութիւն» կը նշանակէ այս պարագային մէջ: Այն հաւատարմութիւնն է, որ համաձայնութեան մը գալ այս հիման վրայ, մանրամասնութեանց մոնետր պէտք չենք տեսներ. Յանձնաժողովը գումարուեցաւ արդէն խորհրդակցելու համար պատրիարքական պաշտօնազօրին վրայ որ ուղղութեամբ էր առաջնորդական Տեղապահին. հարկ եղածը պիտի որոշուի ու գրուի:

Բարեբարելու, պաշտպանելու մէջ պայմաններ կան որ կը յարգուին և կա՛ն որ չեն յարգուիր. երբ անհատը, օրինակի համար, իր տալիքն ունէր բոլորովին անկախ կերպով դուրս ելլալու, իր առաջարկը ինքնին չեղեալ կը նկատուի: Իսկ երբ հաւաքական մարմին մը, պատուաւոր ու գործօն անդամներէ բաղկացած, որպէս է Եգիպտոսի Յանձնաժողովը, փափագ կը յայտնէ խումբ մը որբեր որդեգրել և իր աչքին տակ կամ իրեն շատ մօտ հաստատութեան մը մէջ դաստիարակել տալ զանոնք, ճանչնալով ազգ. օրինաւոր իշխանութեան իրաւասութիւնը ու անոր կարծիքը հարցունելով կանխաւ, ասոր փոխարէն իրաւունք կունենայ հաւանութիւն սպասելու:

Այս մարմինը, իր կազմութեան առաջին օրէն սկզբունք դրաւ իրեն՝ որբերը բերել տալ և խնամել ու կրթել զանոնք յարմարագոյն դաստիարակութեան տեղ մը. ինչո՞ւ ընդդիմանալ այս բարի տրամադրութեան. տարուէ տարի Պոլիս գումար մը խրկելը կրնայ գործնական նկատուիլ Պատրիարքարանին համար, բայց նպատակայարմար չէ մեր Յանձնաժողովին տեսութեամբ: Անոր նպատակը ու սկզբունքը յարգելու է. հակառակ պարագային, անդամներն ա՛լ, նուիրատուներն ա՛լ կրնան ջլաւորուիլ, և մի՛ մոռնաք թէ տուժողը քանի մը տասնեակ դժբաղդ տղաքներ պիտի ըլլան,

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Եթէ պաշտօնական ֆրանսան, կառավարութիւնը, արեւելեան խնդրին մէջ իր հետեւած տարաւ ու սկսած ֆաղափարականութեան քերականը՝ գործնականապէս անտարբեր մընաց ու կը մնայ նաեւ հայ ազգին կրած աղետներուն առջեւ, կայ սակայն իր մէջ վեհանձն զգացողներու տեսք ու ճշմարտապէս կարեկից մաս մը, գրագէտներ, երես-

փոխաններ, օրագրողներ, փաստաբաններ, ֆաղափագէտներ, եկեղեցականներ, որոնք մեր արդար ու համեմատաբար ընդգրկած են սերսիւ եւ ասեւ ասեւ կը յիշեցունեն կառավարութեան գոռիւր գեղարդներուն:

Այսպէս, Բարիքի ժամանակակիցական մասնախումբը, որ կը քաղկական այդ կարգի անձնատրոսքներէն, խորիմ ուշադրութեան արժանի գիր մը ուղղած է նախաւարտապէս Պ. Մէլիսի, Թուրքիոյ հայերուն արդի կացութեան վրայ: Առասիկ սնոր ֆաւնի մը մասերը:

«Ջարդերու թուականը վերջացած չէ տակաւին ի Հայաստան և Թուրքիոյ բանակին մէկ մասին մօտաւոր վերադարձն ի Փոքր Ասիա աւելի եւս պիտի սաստկացունէ Անատոլիոյ քրիստոնեայ ժողովրդոց սպառնացող վրտանդները: Այդ զօրքեր, իրենց յայժմութենէն դրգուած և որոնց ատելութիւնն ու մոլեռանդութիւնը սաստկացած են Յունաստանի դէմ՝ մղուած պատերազմէն, իրենց տեղերը պիտի դառնան ծարաւի արեան ու կողոպուտի: Թէ հայերն ի՞նչ բան կրնան վստահալ անոնցմէ, անցեալը շատ ապահով կերպով գուշակել կուտայ մեզ:»

Պարզելէ յետոյ այդ ծանր վիճակները, ժամանակակիցական մասնախումբը կեցրակացունէ թէ հարկ է ազդու միջոցներ ձեռնառնել:

«Եթէ քրիստոնեաներուն պաշտպանութեանը համար զօրեղ միջոցներ ձեռք չառնուին անյապաղ, 1895ի կոտորածներու նման կոտորածներ արիւնի մէջ պիտի թաթխեն Հայաստանը:

«Եւրոպայի կը պատկանի, Պէրլինի Դաշնագրին ՅԱՐԳ յօդուածին համաձայն, մանաւանդ Ֆրանսայի կը պատկանի օտմ: Կառավարութեան պահանջել հարկ եղած երաշխաւորութիւնները իր հայ հպատակներուն անձնական ապահովութեան և խղճի ազատութեան նկատմամբ:

«Եթէ արագ կերպով չընծայուին անոնց պէտք եղած պաշտպանութիւնն ու երաշխաւորութիւնը՝ վերահաս աղէտներու առաջին առնելու համար, թափուած արիւնին պատասխանատուութիւնը պիտի մնայ թէ՛ օտմ: Կառավարութեան վրայ որ չէ կրցած կամ ուզած հարկ եղած միջոցները ձեռք առնել, և թէ՛ եւրոպական դահլիճներուն վրայ որոնք առ այդ հարկադրած չեն դիւրքը:»

տեղեր : Միւս կողմէ , ոստիկանութիւնը իմացեր է եղեր թէ հայ յեղափոխական մասնախումբէն քանի մը անդամներ գաղտնապէս Պոլիս մտեր են :

—Միլանի Սեֆօջօ լրագիրը կիմանայ Կ. Պոլսէն թէ Բ. Դուռը սրոյնք է աւելցունել Տրիպոլիոյ պահապան զօրաց թիւը , վախնալով որ Խոսրոյ կողմէ յանկարծակիի չի գայ Նոյն թերթին թղթակիցը կը յարէ թէ կասկածելի նկատուած հայերու ձերբակալումները վերսկսած են ի Կ. Պոլիս : Բազմաթիւ եւրեւելիներ հսկողութեան տակ առնուեր են՝ պալատ զրկուած սպանական անստորագիր նամակներու պատճառաւ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կ. Պոլսոյ թերթերը կը հաղորդեն թէ Օրմանեան Պատրիարքը նախորդ շաբթուն պալատ հրախրուելով , կայսերական մեծաբանքի արժանացեր է :

Յաջորդ օրն ալ Գաղաքական Ժողովի աւտենպետ Տատեան Արթին փաշան պալատ երթալով , տեսակցութիւն մը ունեցեր է առաջին քարտուղար Թահսին պէյի հետ :

Արդեօք առնչութիւն մը կա՞յ այս մեծաբանքներուն ու տեսակցութիւններուն և եւրոպական թերթերու յիշած կայսերական խոստումին միջեւ զոր արտառպած ենք այսօրուան «Կ. Պոլսոյ վիճակը» խորագրին տակ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Սուտանի սահմանադրութիւնը երէկ հասած լուրերու նայելով՝ Գիշեր փաշայի բանակը Ապու-Համատը գրաւեր է , տէրվիշներուն դէմ մղուած ճակատամարտէ մը ետք , որոնք ցիրուցան եղեր ու խոյս տուեր են : Գրաւիչ զօրադուռներն կը հրամայէր Հընթըր փաշա . երկու անգլիացի հազարապետ , Սիւնէյ և Ֆիքքլաբէն , մեռեր են այս ճակատամարտին մէջ . թշնամի բանակին կորուստները բազմաթիւ են բաղդատմամբ անդրեւեգիպտական բանակին ունեցած կորուստներուն :

—Բարձր. Խտիվը մօտեցաւ Գահիրէ պիտի դայ՝ երկու-երեք օր Գուպպէի պալատն անցուներու :

—Բրէնսէս Նազըր հանրմ որ Լոնտոն գացած էր Թագուհւոյն յորէլեանին ներկայ գլուխուր , Անգլիայէն մեկնելէ առաջ ընդունուեր է Սոլդպէրի մարքիզին ու մարքիզուհւոյն կողմէ :

—Բարձր. Խտիվին մայրը որ Կ. Պոլիս կը գտնուի օգափոխութեան համար , առաջիկայ ամսուան վերջը Եգիպտոս պիտի դառնայ :

—Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Պուլթրոս փաշա ամսոյս 20ին Եւրոպա պիտի ուղեւորի արձակուրդով :

—Էյ-Մուշիւր լրագրին դատը , որ երկրորդ անգամ պիտի քննուէր տեղական վերաքննիչատեհին կողմէ , յետաձգուեցաւ հոկտեմբերին :

—Մուգաթթաւ լրագիրը կը պատմէ թէ ծանրակշիռ միջադէպ մը պատահեր է ի Միւնէ , արար խումբի մը կողմէ տրուած թատերական ներկայացման մը առթիւ :

Նիւթն էր Կ. Պոլսոյ առումը տաճիկներուն կողմէ . զերասաններէ մէկը , գրգռման վայրկենի մը մէջ , իր ընկերոջ ձեռքէն յափշտակելով խաչին դրօշակը՝ ոտնակիս ըրեր է զայն :

—Երէկ գիշեր աւարտեցաւ Ապպասիէյի մեծ Մուլէտը (Մարգարէին ծննդեան առթիւ կատարուած հանդէս) : Շատ տարիներէ ի վեր , այսպիսի ոգեւորութիւն չէր տիրած այս տօնախմբութեան առթիւ :

—Էզպէքիէի մէկ օթէյին մէջ սպաննուած ալճէրիացիին խնդրոյն քննութիւնը շարունակուելու վրայ է : Ոստիկանութիւնը Աղեքսանդրիոյ մէջ երկու ալճէրիացիներ ձերբակալեց որոնք յարաբերութիւններ ունեցած էին ոճիւրին զոհ եղող իրենց հայրենակցին հետ :

Կը կարծուի թէ յանցաւորները ասոնք են և թէ օթէյին սպասաւորները իրենց մեղսակիցները եղած ըլլան :

Գննութեան միջոցին յայտնուեցաւ որ օթէյին վարձակալ կինը դեռ վարձքը վճարած չէր , ինչպէս նաեւ իր տարիածուն չէր վճարած Գարեջրատան մը վարձքը զոր Էզպէքիէի մէջ բացած էր : Սակայն 100 նաբոլէոնի գումար մը գտնուեցաւ այս երկուքին քովէն :

Հաւանական է որ վերոյիշեալ երկու ալճէրիացիներու ձերբակալութեամբ այդ խորհրդաւոր ոճրին գաղտնիքը պարզուի բոլորովին :

—Աղեքսանդրիոյ ելեկտրական թրամվէյները պիտի բանին Սեպտեմբեր 1էն սկըսեալ :

Եգիպտոսի երկրորդ քաղաքը քանի մը օրէն նորութիւն մը աւելի պիտի ունենայ և քանի մը բնակիչ պակաս , եթէ հոն ալ Փանրապախեաները իրենց Տէյպլէրական դաշտօնէն չի հրաժարին :

ՎԵՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Բեդրապուրի , 7 օգոստոս . — Գերմանիոյ կայսրն ու կայսրուհին Բէթլէյհօֆ հասան Չարին ու Չարուհւոյն ընկերակցութեամբ որոնք զանոնք դիմաւորելու գացած էին Լօնկենդիլըն գոտանալը :

8 օգոստոս . — Չարը թափակ պարսկելով գերման վեհապետներուն կենաց , ըստ թէ իրենց այցելութիւն թանկագին երաշխաւորութիւն մըն է խաղաղութեան պահպանման : Վիլհէլմ կայսրը պատասխանեց , երգում ընելով թէ պիտի օգնէ Չարին՝ խաղաղութիւնը պահպանելու համար և զօրաւոր աջակցութիւն մը պիտի նուիրէ անոր՝ ամեն անոնց դէմ որոնք փորձեն խաղաղութիւնը խանգարել կամ խղել :

Չարը՝ ռուս պատուակալ ծովակալի տիտղոսը նուիրեց Վիլհէլմ կայսր :

Ռուսնուր , 7 օգոստոս . — Ռուսները վաւերացուցանին մէջ պայթում մը պատահեցաւ : 46 հոգի մեռան և 60 հոգի վիրաւորուեցան :

Կ. Պոլիս , 9 օգոստոս . — Օսմանեան նաւատորմը Իզմիր հասաւ :

10 օգոստոս . — Թուրք թերթերը խտիւ կը քննադատեն Հնդկաստանի անգլիական վարչութիւնը :

Աթէնք , 8 օգոստոս . — Յունաստան չըջարեալ կան մը ուղղելով Տէրութիւններուն , առաջարկեց որ նոր փոխառութիւն մը կնքէ պատերազմական տուգանքը կարենալ վճարելու համար . այդ փոխառութիւն պիտի երաշխաւորուի սեղանաւորական տուններու կողմէ կարգուելիք յանձնաժողովի մը կողմէ . այս կերպով Յունաստան կուզէ ազատել իր երկմուտքը միջազգային քոնդրուի մը ենթարկելու հարկէն :

10 օգոստոս . — Կը հաւաստեն թէ նոր փոխառութիւն մը կնքելու համար եղած յունական ու ռաջարկին գոհացում չի պիտի տան սեղանաւորներն :

Ըստ որում Յունաստան իր հասցիներն աւելցունելու վիճակի մէջ չէ :

Թուրքերը Թեսալիայէն չի պիտի ելլեն մինչեւ որ Յունաստան չընդունի երկտական բոնդորլի մը հաստատման համար Տէրութեանց պահանջումը :

ԵՐԳ ԹԵ ՈՂԲ

Փողոցներուն , հրապարակներուն մէջ կերթան երգելով , գեղարուեստը իւր ամենապարզ ձեւին տակ :

Շրջուն վաճառողներն են անոնք . և անոնցմ , շատեր ունին երգ մը , որ յաճախ ողորմէ :

Եւ ինչո՞ւ տխուր չըլլան . չէ՞ որ շատ անգամ , խորխորտիչ արեւուն տակ , աւելի կամ նուազ ծանր բեռի մը տակ կ'ըսեն , օրն ի բուն աշխատելէ վերջը , հազիւ չորսրեկ հաց մը կը գտնեն իրենց ու իրենցներուն համար :

Ինչո՞ւ տխուր չըլլան Անձնուէր և քարասիրտ մարդեր կան , որ կը պնդեն թէ անոնք տրտում կամ վշտաբեկ ըլլալու պատճառներ չունին , և թէ բուական կը որ գումար մը կը շահին ամէն օր : Անոնքն ալ : Անոնքն ալ : Եւ այսպէս գոհացում տալով իրենց ետականութեան , որ ամենէն եղելի աղքատներն ու մուրաքիկներուն դատապարտութեան համար ալ ունի միջին փաստեր , կամրանան կապաւտանին իրենց անձնուէր ապահովութեան մէջ՝ իրենց խղճին , եթէ ունին , հալածանքներուն երեսէն :

Եւ իրենք անկարող են տեսնելու , զգալու թէ փողոցի այդ երգերն , ինչպէս ըսի , արտասուածոր են շատ անգամ , թէ անոնց մէջ երկար ժամանակ ուսումնասիրուած շեշտեր կան , զոր այդ անժառանգ վաճառողներն կը հանեն իրենց հոգւոյն կամ գիշերային հանգստեան սուղ ժամերէն գոլցուած տխուր տխուր խորհուրդներու խորէն , ի գութ շարժելու համար իրենց նմաններն և իրենց ապրանքներուն վրայ անոնց ուշադրութիւնը հափափելու համար :

Եւ փողոցներուն , հրապարակներուն մէջ կերթան անոնք երգելով , որը կ'ոնուի կանուխ առաւօտուն , խառնելով իւր ողբալին նուազը ազաւաղին ալ՝ աւելի ողբալին երգին հետ և մեր հոգին լեցնելով անդրաշխարհային անձեռնարկի զգացումներով , երբ կը խորհին թէ դարեր առաջ , նոյն փողոցներուն մէջ , նմանօրինակ ձայներ , նոյն տղտուածութեամբ լեցուն , կը սլանային դէպ ի վեր վաղաքարէն շուրջ հուրերուն այգեղին հետ զուգանալու , որը ցերեկին , արեգական ջերմ , ջերմ ճառագայթներուն տակ , երբ այնչափ ատրաշէկ ու կիլիճ է տունէն թաղաւորին նայուածքը , որ շատեր մահացուաց աչքեր շլանալով կը փակուին և կը նիւհեն նաեւաստուեր խուցերու բնէած ու հով սրահակներուն տակ , միմեջեւ իւր վաճառքներուն գովեստները , բայց վերջ ի վերջոյ , հրատառոր և քրտնաթաթաւ , խոնջ անդամներն տարածելով վայրկեան մը շէնքի մը քուին յօրինած անօր հուսանային ներքեւ , այդ պահուն կենաց շարժումներուն մահացումէն յուսարեկ , և իր սովորական ժրութեանը հակառակ , վայրկեան մը նմանելով դաշտարանի պղերգ ձայնի որ , սովորաբար ու կարծես սրբողած , մէկ ոտքի վրայ կը սպասէ ժամերով ու օրերով որ բարեյաջող հով մը քիչ մը սնունդ սփռէ իրեն մօտերը . որը երեկոյին , շատ ուշ , շատ ուշ , խաւարներու մէջ պտույնելով իր աղիւղորմ կերկեր կան չիւնները , ցանցաւ ցաղերը շարժուող թռչուններն կաթիլ մը սպասելով իւր պապակեալ գոլութեան :

Երբեմն , ո՞վ դարմանք , ո՞վ սեղմումն սրտի , այդ աւազներուն մէջ կը ծանչնաս ձայն մը զոր մանկութեանդ լսած ես , երկար , երկար տարիներ առաջ , ուր կապչիս ունկնդրելով այդ նուագին զոր տարեց մարդ մը կողքար երեսուն տարի առաջ և նոյն տարեց ունեցող մարդ մը կը հեծէ հիմայ , ինչպէս . չէ՞ ծերացած , չէ՞ մեռած առջինը . այո՛ , նա այլ եւս չկայ . ու սա անոր որդին է կամ թոռը և ժառանգութեամբ զուկէ գաւակ կը փոխադրուին այդ երգերը , որպէս հայրենի ինչք մը կամ հարստութիւն մը . միայն թէ անոնք չեն փճանար ու չեն ջնջուիր . և ահա ասոր համար կըսէի թէ ապշութեամբ կը մտածէ մարդ ի՞նչ , նոյն այդ ողբունման ձայները նոյն մեղամաղձութեամբ կը թռչէին կուրծքերէ , որոց դարերէ ի վեր լսած են բարախումները : Բայց անոնց ամենուն մէջ , խորագոյն տալու լուծիւնը թողուլը տեսայ , Գահիրէի լայն փողոցներ :

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԵՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՄԱԶՈՂԼՈՒ Գ Ա Ն Ի Ր Է

Դէն միայն մէջ, բանականներու կամ պրակտիկներու վաճառողի մը, որ արեւելքի չէր սակայն. ըսին թէ Մարտիրոսի մ'էր, զանազան պարագայներէ նետուած այս քաղաքը և բազմաթիւներ ծախելու ըզրազած: Այն ամիս կայ, անհետացած է: Բախտաւ խղիւղի մը թերեւս. ո՞վ գիտէ. քայքայ անոր աներեւութացումը, զրկանք մը, ճշմարիտ արարածութիւն մը, ոչ թէ ինծի համար բոլորովին, այլ գեղեցիկ սեռէն շատերուն համար:

Երեւակայեցէ թուի աչքերով ու յօնքերով և դեռաւոր թոյրաթուի ընչացքով միջնահասակ երիտասարդ մը, հասակ ծածկուած լայն խորշխորանքներով ձիւնապատակ մաքուր, մաքուր հանգերձնէրով, գլուխը դրած խաչարարի քիչ մը վիթխարի բեղոյր մը նայեալէս ձիւնաթոյր, բայուածքը լուրջ, զրեւթէ զինուորական, ինքն ալ աւելի լուրջ, փիլիսոփայ մը հոսկիտի զգեստներ հագած, քաղաքագետ մը, պետական մարդ մը որ, լարեկենդանի հանդերձներով ծածկուած, փողոցները կը չափէր գրեթէ նոր ոմն Ներոն թատերաբեմին վրայ:

Իսկ ծայրը, իսկ երգը. ոչ, այն ծայրը, այն ուստի երբէք չպիտի մոռնամ, և յաւիտենութեան չափ երկար ժամանակէ ի վեր սովորած երգի մը պէս պիտի հնչէ միշտ հոգեւոր խորերուն մէջ: Ութ կամ տասը խաղ. այսչափ միայն. քայքայ ո՞ր Վալինէրը, ո՞ր Պէթիֆֆէնը ներշնչեց այդ մարդուն այդ քանի մը շնչոտերն, նախ և առաջ անհուն անպատմելի տրամադրեամբ լցուած, և վերջը դառնալով ողորհ հրաւեր մը, արարատանք մը, պիտի ըսէի գործադրող քերթուած մը, զոր սովորած էր թերեւս թշուառութեան ու կարօտութեան խորհրդաշունչ դարձողին մէջ...

Ի լուր այդ երգին զոր քանի մը վայրկեանը անդամ մը կը լսեցնէր՝ զաղբեցնելով իր ծանր քաղաքը, և նայուածքն երկնապիշ, թխազեղ և խարտեաչ իգական գլուխներու պատուհաններէն կախուիլը կը տեսնէիր, և փողոցէն իրենց գաւակներուն հետ անցնող տանտիկիներ, յանկարծ իրրեւ զտալ, նստիվ մը կանգ առնելէ յետոյ, զմայլած, յուզումէ կարմրած, կը մօտենային խումբ խումբ տուրեստ ընկ թաղոր բաներ ծախող այդ քաղաքաձայն երկատաւորին հետ:

Եւ պատուհանները, թափուր նախ և առաջ, հիմայ բաւական ժամանակ զարդարուած կը մնային խաղաղապետ կերպարաններով, մինչեւ որ բոլորովին անհետանար մարդը և շիջանէր ծայրը:

Եւ ֆէլլա ստամբակները, անոնք ալ, պիտի կառուտ հեռաւորութեամբ, հրճուանքի ժպիտ մը չըր. թունքներուն վրայ, կը հետեւէին անոր, անկերեւ կերպով զմայլած, յուզուած, այլ յայլէ եղած, շունչներին բռնած:

Հեռուէն, հեռուէն, աչքէ կորսուելէ վերջն ալ, մօտիկ կ'ընէի այն երգին, զէթ մէկ պատասառ ըմբռնելու համար դեռ, և կը կարծէի թէ մարդ մը չէր այլ եւս որ այդ միմունջը կը գեղեցիկ ֆէկիւլայի լայն փողոցին մէջ, այլ նորանշան սպիտակափայլ թռչուն մը, որուն սուրճը, հոգեզոյալ, այտերը կը կարմրեցնէր և շնչառութիւնները կը կասեցնէր, իբր թէ ամենքը վախնային թէ բաւական չեն լսեր զայն կամ թէ մի գուցէ հարթ չեցնեն ու փախցուեն այդ ձիւնախաղ կարապը տարօրինակ:

Կարապ, այո, և իր երգը, կարապի երգը. վասն զի ո՞ր գնաց, ի՞նչ եղաւ այդ շատ հաւանութիւն զփաղը ու տառապեալ արարածը: Թերեւս տառաքամ զրաւեցաւ չտոկարով խոնջութեան մը որուն վարժուած չէր. չկա՞ն այնպիսիներ, կամ թերեւս յուսահատած այն անհասարար ու դժնեայ մարտէն զոր կը մղէր իր գոյութեան պահպանման համար, երբ տեսաւ թէ չէր արժէր, ըրաւ ինչ որ ըստ մեզ զիջողութեան արդիւնք է երբ զերծ է մարդ ազերանքէ, և ըստ ոմանց՝ յիմարութիւն:

Յ. ՍԵԹԵԱՆ

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստամբուի, մորի և ջրային հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն դիմող հիւանդները Մեզոն Զահար, Շեքիթ Զօքիի հիւր դիմը. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կես օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաւձի կը դարմանուին:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Իրագրի

Ուզողներու համար լուսարարութեան ճիւղ մ'ալ աւելցուած է, ուր՝ յաճախորդներուն ճերմակեղէնները զատ զատ լուարւ գնահատելի դրութիւնը հաստատած է:

Ի դիւրութիւն յաճախորդաց ճերմակեղէնները՝ ինք անձամբ պիտի առնէ տուներէն և պիտի վերադարձնէ:

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԼՆԿ.

ԳԱՆԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՆԵԹԻ

ՍԵՏԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Ընդհանուր Մքերանց «Շարա Ազպա»

Խառն Դասարաններու դիմ:

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆ ՍԻԿԱՆԵԹՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուսեալ 1000 հատը 2 1/2 Անգ. ոսկի

»	Խրտիվեալ	»	»	2	»	»
»	Պալատական	»	»	1 1/2	»	»
»	Պօհճա	»	»	1 1/4	»	»
»	Նաթիւրէլ	»	»	1	»	»
»	Ֆուռ	»	»	20	Փրանք	

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՆԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՑ ԳԻԾ

Կ Ա Ց Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.		Կէս ուզ. 1,2,3 կգ.		Օմնիպ. 1,2,3 կգ.		Էքսորէս 1, 2 կգ.		Օմնիպ. 1,2,3 կգ.		Էքսորէս 1, 2 կգ.		Օմնիպ. 1 2 3 կարգ	
		առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —					
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35					
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44					
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54					
Տամանհուր	»	երեկոյ	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51				
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50					

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՑԻ ԳԱՆԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Ց Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.		Կէս ուզ. 1,2,3 կգ.		Էքսորէս 1 2 կգ.		Խառն 1,2,3 կգ.		Էքսորէս 1 2 կգ.		Օմնիպ. 1 2 3 կարգ	
		առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.	առտ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —			
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9			
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56			
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6			
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25			
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50			

ԳԱՆԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԷՆՀԱՅԻ ԶԱՄԱՑ

ՍԻԷՋ-ԳԱՆԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՑ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՑ	ԵՐԵԿՈՑ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա }	ժամ.	երեկոյ 12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53	Իսմաիլիա	»	երեկոյ 1 20	7 5
Զակաղիկ }	ժամ.	1 34	8 54	Զակաղիկ)	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Իսմաիլիա	մեկ.	3 40	առտ. 1 —	Պէնհա }	ժամ.	4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	մեկ.	4 17	9 4	
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35